

# Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԽԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՑ. — Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես բազմ. 1923, էջ 158)

## ԽԴ

Հետաքրքրաշարժ նիւթերով լի է հետեւեալ նամակը: Անոնք գլխաւորապէս վաճառական կարգերու, ինչպէս նաև առուծախի շուրջ տրուած մանրամասն տեղեկութիւններ են, ինչ որ կը ցուցնեն՝ թէ ժամանակը դարեւրու շրջանին մէջ ինչպիսի հսկայ փոփոխութեանց կ'ենթարկուի:

Գերայարգեցելոյ և վսեմագունեղի տեսան տեսան  
Մխիթարայ Աբրա չօրն մերոյ

... Թագաւորին<sup>1</sup> (Վիեննայի) Խոստովանահայրն ճէզուիթ է, և կայսրն զնա ընդհանրական փարուքեալ<sup>2</sup> է հաստատեալ, վասն որոյ տեղոյս ճէզուիթքն փարուքայութիւն<sup>3</sup> առնեն, և թէպէտ կայսրն տուեալ է զժողովուրդն եպիսկոպոսին զի վասն նոցա արասցէ զփարուքայութիւն, բայց ոչ զգինուորսն, զի վասն գինուորաց կայսրն ի տարւոյ Ռ զօլաթայ տայ ճէզուիթաց. նոյնքան ևս ասեն ի զինուորաց զայ: Արքա սկսեալ են վերակերտել զվասն իւրեանց. նիւթքն սորին ի Թագաւորէն տրի, իսկ վարձքն աշխատողաց ինքեանք վճարեն. 10 տարին հազիւ եզերի ասեն. բաց ի նիւթիցն ասեն թէ եօթնասունն Ռ զօլաթայով հազիւ եզերի: Կափուճինաց նիւթն և աշխատողաց վարձն, Թագաւորն և էւվճէնիոսն<sup>4</sup> տան. սոցին վանքն փութով եզերի քան զայլս վանս կարգաւորաց: Աստ զտանին 6, 7 կարգ, բնաւ սկսեալ են շինել, թող զթաղաքացիս, որք ի բազում տեղիս սկսեալ են շինել զտունն և զխանութս մեծածախս, և վասն շինման Ալեքսանդր Բրիտնի միլիոն է գնացեալ ասեն: Քաղաքս այս զկնի հնգետասանից ամաց այնքան բազմանալոց է մարդկամբ, մինչ զի անդր անցանելոց է ամրութեամբ և մարդկամբ քան զվէնա, թէպէտ այժմ լի է մարդկամբ և օր ըստ օրէ աւելանայ, բազմիցս առ ի չգոյէ նիւթոց վարպետքն պարապ մնան, և վասն թուվայի և քերէճի 40, 50 տեղ փուռ վառի, և վասն միոյ փուռն 24 օրն 160 արապայ փայտ գնայ. և ըստ այսմ հաշուեայ, թէ բնաւիցն ի բոլոր տարւոյ որքան փայտ գնայ, նաև որքան մարդիկք ի պատեհոս սոցա դատին և աշխատին: Այսքան փուռն չեւմութիւնն և քերէճի հոսն՝ քաղաքիս դոյն ինչ ապականեն զօգն: Զբոլոր և զահագին քաղաքս այս պարսպաւորեալ են, թէպէտ ոչ է եզերեալ: Նաև յետ եզերման պարսպիս այսորիկ շինելոց են զոմանս բերդորայս արտաքոյ պարսպին: Վերջապէս սմին նման ի ներքոյ

1. Կարլուս Զ.

2. Parroco = ժողովրդագետ:

3. Ժողովրդագետութիւն:

4. Եւզենիոս սաղայացի իշխան:

արեգական անկարելի է գտանել... Պարսպաց և բերդից փոռան<sup>1</sup> է ինկիլիզ, տարին ունի ի թագաւորէն աւելի քան 15000 զօլաթայ... Ասեն թէ յամենայնում տարւոյ Վասն շինման քաղաքիս ի թագաւորէն միլեօնէր գայ աստ. պարսպին 1 թուվլան խարճոմ<sup>2</sup> 10 սօլի լինի. և խարճն պարսպին ըստ ոմանց փափի վճարէ ասեն: Տեղւոյս մուռեր-քեն<sup>3</sup> և մանուալքն<sup>4</sup> նէմսէյ են, և խիտ յամր բանին, և յաւուրն 3 ժամ հանգչին և ոչ բանին. եթէ ասիցեն վարպետին և կամ մանուալին թէ ընդէր յամր շարժիս. և ընդ լսելն զայսպիսիս<sup>5</sup> իսկոյն թողու զբանն անկատար և գնայ ի յայլ տեղիս. թէ մուռերն և թէ տիրակէլքն աւուրչէքն 3, 3 լիտի է. ոչ դրամ պահել գիտեն և ոչ ջուր խմել, այլ և իբրև զանասուն զրէթէ անզաղար ուտեն և ըմպեն... և... Աստ խանութի և տան քիրան խիտ թանկ է 100 զօլաթայ, 120, 150. բժիշկին ևս. գոն ոմանք որք մի անգամ զալով<sup>6</sup> զմի ոսկի առնուն և ոմանք 1 զօլաթայ: Կովու միսի դիւան 8 սօլի է, հորթու միսն 16, ոչխարին 8, ճիւղին 3, 4 սօլի: Հացն լաւ է, պաղեղէնն սակաւ է, պարտախ էրիզին աժան է, խնձորն ևս: Զմերուկն առատ է և սեղի շուռալ: Գոյ գինի որ Օխան 10 սօլի է, գոյ գինի որ 15, 20 սօլի է, սալաթան պակաս է:... սափայի ջուրն խիտ վատ է, թուռայուն միջակ, և ճէնալի աղբեր ջուրն լաւ է ասեն...:

Նուստապոյն ծառայ

Եղիա վարդապետ

Յամր Տեառն 1732  
Յօգոստոս 30 [Պելկրատ]

## ԽԵ.

Պատմական բաժնին զասելի ահա փոքր նամակ մը, զոր Պոլսէն կը ղրկէ Հ. Պողոս Վ. Սիմոնեան:

Գերայարգեցելոյ տեսնեմ տեսնեմ Մխիթարայ Աբբայի  
Հօր մերոյ և Աստուածարարական վարդապետի

... վեց նաւք վէնէտիկու գոն աստէն, ասեն թէ յետ մեծ բարեկենդականին չուեն աստի ի յիզմիր. բայց թուի ինձ, թէ յամեն աստէն մինչև ի Զատիկ. քանզի ձէզայր. ցոց եօթն նաւք եկեալք ի Ֆօշայ, որոց չորք նաւքն մտեալք են ի ներքս պօղոս հիզարու առ ի բերել զընծայս թագաւորին տաճկաց, և առնուլ ի նմանէ զօգնութիւն և դառնալ զնալ յերկրին իւրեանց. ուստի որքան սոքա յամին աստ, և այնքան յամեն նաւքն վե- նէտիկեաց հանդերձ ամենայն պատրաստութեամբ. քանզի ձէզայրցոց մուֆտին յետ ա- ունցման վարհանին ի յըսպանեացոց եկն ի ստամպօլ ցամաքաւ զայն վերոյ զրեցեալ շնորհոն էառ ի թագաւորէն տաճկաց... Գաւուր միում գնացի ի սուրբ Անդօնի վանքն առ ի տեսնել զՅօհան վարդապետն, և գտի զնա արարեալ զմեծ խրախճան վասն այցե- լուին և կարգաւորացն սուրբ Անդօնի վասն շինութեան նորակերտ բնակարանին իւրոյ, զոր շինեաց վասն բնակութեան իւրոյ մինչ ինքն կենդանի է, յետ մահուան մնալ մե- նաստանի սուրբ Անդօնին...:

Գերայարգութեան ձերում

Նուստ ծառայ ս. տ. ս

Հ. Պողոս Վ. [արդապետ]

(ի Ղալաթեայ)  
Յամր Տեառն 1733  
և Փետրուարի 6

1. Պեա:
2. Ուրմագիր:
3. Գործաւոր:

## ԽԶ.

Պարսիկ—Օսմանեան ճակատամարտի մը մէկ ընդհարումն է որ կը ներկայացուի մեր հետագայ նամակին մէջ՝ մանրամասն պարագաներով։ Այս նամակը գրուած ըլլալով նշանակուած տարւոյն մայիս 9ին՝ նամակագիրը բնականաբար կը հասցնէ մինչև Օսմանցոց վերջընթեր պարտութեան վախճանը։ Վճռական համարուածը տեղի կ'ունենայ ճիշդ յիշեալ թուականէն վերջ՝ յետ յուլիս 19ի, երբ յիշատակուած թօփալ Օսման — թէ՛ն շատ տեղէ վերաւոր — արիացած՝ զլուխ կ'անցնի բանակին ու խորտակելով պարսիկները՝ մեծ հանդէսով Պաղտատ կը մտնէ։ Սակայն պատմութիւնը կ'ըսէ որ ցնծութիւնը կարճատեւ կ'ըլլայ, վասն զի երեք ամիս վերջ յաղթութիւնը պարսիկներուն կողմը կը դառնայ։

Անդրադարձնենք նաև, որ մեր հետեւեալ թուղթին մէջ բերուած թօփալ Հասան և Օսման անունները միևնոյն անձը կը ներկայացնեն։

Փերայագեցիոյ և Վսեմագունի տեսան տեսան Միխրայայ  
Աստուածաբանութեան վարդապետի և Արքայ Հօրն միտում

. . . Հա և զայս ծանիր, զի զօրքն պարսից մեծաւ պատրաստութեամբ կանխաշար-  
ժութեամբ չուեալ ի յիսպահանու գնացեալ և պաշարեալ են նպատտութեամբ քրտից և  
արապից զՊաղտատ, և յետ ոմանց ամսոց պատճառաւ սովու առանց մարտի առեալ են  
գնաւ։ Եւ մինչ լուան ոմանք զայսպիսի լուրս, զմեծագոյն խելագարութիւն վարկեցին  
գնալն նոցին ի Պաղտատ ասելով, թէ ոյսքան երկրներն թողեալ են ի ձեռն տանկաց,  
և գնացեալ են առնուլ զանառիկ քաղաքն այն։ Իսկ այլք ոմանք իմաստակգ զներհակն  
նոցին կաշնլով, առաւել զմեծ իմն խոհեմութիւն վարկեցին գնալն նոցին ի Պաղտատ,  
քան թէ իրէվան, և առ այս բերեն զերկուս պատճառս, որոց մինն է այս, ասեն, թէ  
յոյժ առաւել դիրին է զօրացն պարսից գնալ ի Պաղտատ, քան թէ ի Նախշիվան և  
Իրէվան, և այս ի կողմանէ նախաշարժութեան, և թէ ի կողմանէ նպատիցն, որք կարեն  
դիրաբար օգնել։ Երկրորդն է զի զօրն քաղաքն առնլով, թերևս այսու ընկճեալ զօրքն  
տանկաց հաճեալ կամիցին ըստ առաջնոյ նուագին տալ զԻրէվան և զայլս քաղաքս,  
զորս ունին սոքա փոխանակ Պաղտատու, ըստ որում նախապէս եղեալ է, այսինքն ի  
ժամանակս սուլթան Մուրատին և շահապսպին։ Հա և ոմանք աստ ի մեծամեծաց  
ասացին, թէ թօփալ հասան փաշան ի Տեառպէքու լուեալ երեսուն հազար արամբք  
զինուք վառեցելովք կամեցեալ է գնալ ի Պաղտատ առ ի վանել զօրսն պարսից. իսկ  
զիտելով զայս զօրուն պարսից իմիք Ղոթուարին տեղուշ, հուպ Նինուէի յանկարծակի ի  
դրանէ անտի յարուցեալ են ի վերայ տանկաց զօրուն, և զրէթէ զբոլորն ի սուր սուսերի  
մաշեալք են, և Ռսման փաշա 500 անձամբք հազիւ կարացեալ է փախչիլ և գալ ի  
Տեառպէքոր։ Եւ սոյն յաղթութիւնս և կամ առումնս որ եղև, ոչ սոսկ զօրութեամբ և  
քաջութեամբ պարսից լեալ իցէ, այլ և քրտից և արապից, զի մասն քրտից Պարսկաց  
հակեալ են ի կողմն պարսից։ Եւ վասն այնորիկ զօրքն տանկաց մասն ինչ ի կողմն  
Պաղտատու գնան, և մասն ինչ ի վերայ քրտից . . . :

Փերայագութեան քում  
Հուսատագոյն ծառայ  
Եղիա վարդապետ

Յամի փրկութեան մերոյ  
1733 Մայիսի 9

## ԽԷ.

Ընդհանրապես Բարդղղիմէոս վարդապետի առ Միլիթար Աբրահայր ունեցած թղթակցութիւնը ցարդ հետաքրքրական եղաւ մեզ՝ իր պարունակած զանազան օգտակար նիւթերուն համար։ Այժմ իր առաքելական գործունէութեան շուրջ նոր տեղեկութիւն մը կու տայ, ինչ որ զանց չենք ընէր ներկայացնել։

Ամենախիբիւղ և պատուելիւղ տեառն տեսան  
Միլիթար աստուածաբանութեան վարդապետի և Աբրայ Հօր

... գիտենաս, վերապատուելի Հայր, թէ արդէն պատրաստ եմ, և այժմ գնամ ի գոյսոյս, վաղաքի երկիրն, որ է՝ ի ներքոյ տէրութեանն կայսերին մերոյ վասն միսսօնարութեան և հոգաբարձութեան Հայոց ազգին, և ետ ինձ կայսրն որքան բաւական է՝ ապրիւղ և զպատիւն իմ առաւել ըստաղայ քան զառաջինն, և եմ ի ներքոյ ազնուի և պատուական եպիսկոպոսի միոյ, և յոյժ յոյժ ուրախ եմ։ Ձեր հրամանքն միաբանութեամբ աղօթս արարէք վասն իմ անարժանիս, որ եմ միշտ աղոթօղ վասն ձեր, զի ոչ գիտենաք թէ ունիմ ի սրտի իմոյ զխէթ ինչ, այլ եմ և առաւել ևս քան զառաջինն, զի ես ճանաչեմ և զտկարութիւնն իմ և զթշնամիս իմ. կամք տեսան օրհնեալ եղիցի...։

Մնամ պատրաստական տէրութեան ձերում

Ի վենիս 23 Ունիսին  
1733

Խոնարհագոյն Նքառայ  
Բարդղղիմէոս վարդապետ  
Միսսիօն. Առաքելական

(Շարունակելի)

Հ. Ղ. ՏԱԵԱՆ

Ոչ որ յիմարէն աւելի քաջութիւն ունի  
երենալու ճիշդ այնպէս՝ ինչպէս որ է։

Հարուստեի կան՝ որոնք կը բաղձան  
միլիոնատէր ըլլալ, որպէս զի կարենան  
ողորմութիւն ընել։

Երիտասարդութիւնը կը խօսի ծերու-  
թեան մասին իբրեւ դժբախտութեան մը  
վրայ այնպիսի կերպով մը՝ որ կարծես  
ան պիտի չկարենայ գինքն ալ հարուստ  
ծել։

Շատ անգամ օրէնք մը կը ստեղծէ  
այնպիսի չարիք մը՝ զոր կը պատժէ ուրիշ  
օրէնք մը։

Վերջին կամքը շատ անգամ յստակ  
կը բերէ առաջին բարիքը։

Անկեղծ մարդու մը սրտատեսութիւնը  
շատ անգամ իր կասկածոտ անվստահու-  
թիւնն է։

